ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 389-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետը, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանը, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին›› Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդև 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 03.09.2026թ. տրամադրված քաղվածքը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը և Սուրեն Իգնատի Սարգսյանի և Ալինա Սուրենի Պետրոսյանի կողմից լիազորված անձ Արաքսյա Համբարձումի Ալեքսանյանի /մուտք 12.02.2026թ.թիվ 79/ դիմումը՝
Որոշում եմ.

1.Վերականգնել և ճանաչել Սուրեն Իգնատի Սարգսյանի /ծնված՝ 25/05/1955թ/ և Ալինա Սուրենի Պետրոսյանի /ծնված՝ 08/12/1977թ/ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, ք. Թումանյան 11-րդ փողոց 28 հասցեում գտնվող 06-004-0021-0070 ծածկագրով 0.32984 հա մակերեսով տնամերձ հողամասի,128.80 քմ մակերեսով երկհարկանի բնակելի տան և 75.70 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի նկատմամբ:
2. 06-004-0021-0070 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան 11-րդ փողոց 28>> հասցե:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
4.Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 390-Ա

ՍԵՅՐԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՑ ԳՅՈՒՂՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՀԵՍՏԻ,ՊԱՀԵՍՏԻ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով «ՏՍ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագիծը, Սեյրան Արամայիսի Գևորգյանի դիմումը՝
Որոշում եմ.

1. Ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը Սեյրան Արամայիսի Գևորգյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող կադաստրային քարտեզի 06-071-0119-0013 ծածկագրի, արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության գյուղ. արտադրական գործառնական նշանակության 0,04861 հա մակերեսով հողամասում գտնվող, ինքնակամ կառուցված, ընդհանուր 41,6 քմ մակերեսով պահեստը և պահեստի բաց պատշգամբը:
2. Օրինականացնել Թումանյան համայնքի Մարց գյուղում գտնվող, կադաստրային քարտեզի 06-071-0119-0013 ծածկագրի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության գյուղ. արտադրական գործառնական նշանակության 0,04861 հա մակերեսով հողամասում գտնվող, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող, 2023 թվականին ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023 DA4JBH ծածկագրով հաշվառված, ընդհանուր 41.6 քմ արտաքին մակերեսով պահեստը և պահեստի բաց պատշգամբը:
3. 06-071-0119-0013 կադաստրային ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային « ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գյուղ Մարց, 18 պահեստ» հասցեն:
4.Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
5.Պահեստի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
6. Անշարժ գույքի պետական գրանցում ստանալուց հետո, տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Լիանա Լևոնի Խաչատրյանին օրինականացված անավարտ պահեստի և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 391-Ա

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՌԿԱ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՏՐՎԱԾ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և<<Նորմատիվ իրավական ակտերի մասի>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝

Որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել կադաստրային գործում առկա և Թումանյանի համայնքապետարանի կողմից Գյորգի Արմենակի Աստրյանի և Սիրանուշ Վասիլի Ասատրյանի անվամբ տրված Լորուտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից հատկացված 28.08.2026թ. տրված քաղվածքը: Ժառանգության իրավունքի ընդունման և իրավունքի պետական գրանցման համար հիմք ընդունել համայնքի ղեկավարի կողմից հաստատված 08.09.2026 թվականին տրված հողհատկացման ճշտված քաղվածքը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան